ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 191-Ա « 24» հունվարի 2023թ.

ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԱՍԻ ՊՈՂՈՏԱՆ ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ ՓՈՂՈՑԻՆ ՄԻԱՑՆՈՂ ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ ՆՐԲԱՆՑՔԻ ԼԱՅՆԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ, ՆԱԽԱԳԾԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՈՒ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 13-ի N 390-Ն որոշման N 3 հավելվածի 9-րդ կետով և 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 7-րդ կետի 1-ին ենթակետի «ա» և «բ» պարբերություններով, 8-րդ կետի 2-րդ ենթակետով, 12-րդ կետի 1-ին ենթակետով, հաշվի առնելով Երևան քաղաքի գլխավոր հատակագծով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի սեպտեմբերի 7-ի «Երևանի գլխավոր հատակագծի հաստատման մասին» N 1402-Ն որոշմամբ նախատեսված Երևանի Կոմիտասի պողոտան Արամ Խաչատրյան փողոցին միացնող Արամ Խաչատրյան նրբանցքի լայնացման աշխատանքներն իրականացնելու անհրաժեշտությունը.

1. Երևանի Կոմիտասի պողոտան Արամ Խաչատրյան փողոցին միացնող Արամ Խաչատրյան նրբանցքի լայնացման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման, նախագծի փորձաքննության ու կապալային աշխատանքների կատարումն իրականացնելու նպատակով՝

1) «Երևանի կառուցապատման ներդրումային ԾԻԳ» ՀՈԱԿ-ին սահմանել որպես պատասխանատու ստորաբաժանում՝ համաձայն հավելվածի.

2) գնումները համակարգող սահմանել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչությանը:

2.Պատասխանատու ստորաբաժանման ղեկավարին՝ սահմանված կարգով կազմակերպել և իրականացնել Երևանի Կոմիտասի պողոտան Արամ Խաչատրյան փողոցին միացնող Արամ Խաչատրյան նրբանցքի լայնացման աշխատանքների.

1) նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերումը՝ գնման ընթացակարգը կազմակերպելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված հրատապ բաց մրցույթի ձևով՝ կիրառելով 15-րդ հոդվածի 6-րդ մասը, առանց նախաորակավորման ընթացակարգ կիրառելու.

2) նախագծի փորձաքննության աշխատանքների ձեռքբերումը.

3) փորձաքննություն անցած նախագծանախահաշվային փաստաթղթերը ներկայացնել հաստատման՝ շինարարության թույլտվություն ստանալու համար.

4) կապալային աշխատանքների ձեռքբերումը, ինչպես նաև պատվիրատուի անունից հանդես գալու լիազորությունները և պարտականությունները:

3. Սահմանել, որ Երևանի Կոմիտասի պողոտան Արամ Խաչատրյան փողոցին միացնող՝ Արամ Խաչատրյան նրբանցքի լայնացման աշխատանքների նախագծանա-խահաշվային փաստաթղթերի ձեռքբերման, նախագծի փորձաքննության, կառուցման աշխատանքների կազմակերպման ու վերահսկման, պետական գրանցման համար նախատեսված, ինչպես նաև սույն որոշումից բխող աշխատանքների իրականացման համար այլ անհրաժեշտ ծախսերը կատարվում են Երևան համայնքի միջոցների հաշվին:

4. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել «Երևանի կառուցապատման ներդրումային ԾԻԳ» ՀՈԱԿ-ի տնօրենի վրա:

5. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետի տեղակալ Տ.Ավինյանի վրա:

X

ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

Signed by: SARGSYAN HRACHYA 2302850092 **ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ**

Հավելված
Երևանի քաղաքապետի
24.01.2023թ.
հ. 191 -Ա որոշման

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԿՈՄԻՏԱՍԻ ՊՈՂՈՏԱՆ ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ ՓՈՂՈՑԻՆ ՄԻԱՑՆՈՂ ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ ՆՐԲԱՆՑՔԻ ԼԱՅՆԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ, ՆԱԽԱԳԾԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՈՒ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ

Պատասխանատու ստորաբաժանման ղեկավար

Շողիկ Երանյան	«Երևանի կառուցապատման ներդրումային ԾԻԳ» ՀՈԱԿ-ի տնօրեն

Գնման հայտը նախագծող ներկայացուցիչներ

Ֆելիքս Աֆյան	«Երևանի կառուցապատման ներդրումային ԾԻԳ» ՀՈԱԿ-ի տնօրենի առաջին տեղակալ
Խանամիր Աբրահամյան	«Երևանի կառուցապատման ներդրումային ԾԻԳ» ՀՈԱԿ-ի տնօրենի տեղակալ
Գագիկ Մարտիրոսյան	«Երևանի կառուցապատման ներդրումային ԾԻԳ» ՀՈԱԿ-ի շինարարության կազմակերպման և վերահսկողության բաժնի պետ
Գեղամ Թադևոսյան	«Երևանի կառուցապատման ներդրումային ԾԻԳ» ՀՈԱԿ-ի իրավաբանական բաժնի պետի ժ/պ
Վանիկ Միրիբյան	«Երևանի կառուցապատման ներդրումային ԾԻԳ» ՀՈԱԿ-ի հողի օտարման, վերաբնակեցման և մոնիտորինգի բաժնի պետ
Սնառա Թամամյան	«Երևանի կառուցապատման ներդրումային ԾԻԳ» ՀՈԱԿ-ի ֆինանսատնտեսագիտական բաժնի գնումների մասնագետ

X

ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Signed by: SARGSYAN HRACHYA 2302850092 **ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ**